ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ԱՂԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿՈԱԼԻՑԻԱ-ՅԻ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀ-ՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱ-ԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 17 հունիսի 2025 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝ Արման Դիլանյանի,

դատավորներ՝ Հրայր Թովմասյանի,

Դավիթ Խաչատուրյանի,

Երվանդ Խունդկարյանի,

Հովակիմ Հովակիմյանի,

Էդգար Շաթիրյանի,

Սեդա Սաֆարյանի,

Արթուր Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանա-դրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց ««Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2025 թվականի ապրիլի 30-ի N 504-Ա որոշմամբ հավանություն է տվել «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությունը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2025 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ կանոնադրությունը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիա» կազմակերպությունը (այսուհետ՝ ԱԴԵԿ) հիմնադրվել է 2019 թվականին՝ կլիմայի փոփոխության և աղետների կանխարգելման դիմակայության ուժեղացմանն ուղղված նոր և գոյություն ունեցող ենթակառուցվածքների զարգացման ու կատարելագործման նպատակով:

«Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) ստեղծվում է աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիան: ԱԴԵԿ-ն ազգային կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալությունների և ծրագրերի, բազմակողմ զարգացման բանկերի և ֆինանսական մեխանիզմների, մասնավոր ոլորտի, գիտական և կրթական հաստատությունների համաշխարհային գործընկերություն է, որի նպատակն է բարձրացնել ենթակառուցվածքային համակարգերի դիմակայունությունը կլիմայի և աղետների ռիսկերի նկատմամբ՝ դրանով իսկ ապահովելով կայուն զարգացում:

2. Կանոնադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ քարտուղարության կառավարման մեխանիզմները ներառում են երեք հիմնական մարմին, մասնավորապես՝ ղեկավարների խորհուրդ, գործադիր կոմիտե և քարտուղարություն:

Կանոնադրության 9-րդ հոդվածով սահմանվում են ԱԴԵԿ-ի ծրագրերը, որոնք են՝ տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում, հետազոտությունների և գիտելիքների կառավարում, ինչպես նաև քարոզչական գործունեություն և համագործակցություններ:

3. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անդամ պետություն, պարտավորվում է իրավական փաստաթղթերի հիման վրա, ուղղակիորեն կամ Հայաստանի Հանրապետության զարգացման գործակալությունների/մարմինների միջոցով կատարել կամավոր ֆինանսական կամ բնաիրային ներդրումներ ԱԴԵԿ-ում, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության ազգային կառույցներից ԱԴԵԿ-ի քարտուղարությանը տրամադրել փորձագետներ, անցկացնել թեմատիկ աշխատաժողովներ և հանդիպումներ և փոխհատուցել ճանապարհային ծախսեր (հոդված 8, մաս 8.1):

4. Կանոնադրության 10-րդ հոդվածի 10.2-րդ մասով սահմանված է. «Ապագա անդամներն իրենց կողմից կանոնադրությունը հաստատելու մասին կարող են հայտնել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով ղեկավարների խորհրդի համանախագահներին»:

Երկրները և մյուս շահագրգիռ կողմերը, որոնք հաստատել են Կանոնադրությունը, ԱԴԵԿ-ի հիմնադիր անդամներ են (հոդված 2, մաս 2.1):

Կանոնադրության 5-րդ հոդվածի 5.9-րդ մասի «iii» կետի համաձայն՝ Ղեկավարների խորհուրդը հաստատում է ԱԴԵԿ-ում նոր անդամների ընդգրկումը, ինչպես նաև կոնսենսուսի հիման վրա փոփոխություններ է կատարում Կանոնադրության մեջ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունիսի 2025 թվականի
ՍԴՈ-1785